ԴԱՍ-ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴ (ԸՍՏ Ա.ՊԱՐՍԱՄՅԱՆԻ «ՄԵՐ ԼԱՎԱՇ ՀԱՑԸ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ)

Ա. Ա. ԱԶԱՐՅԱՆ
Հրազդանի թիվ 12-րդ դպրոցի
հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

Մեր օրերում ցանկացած առարկայի դասավանդում անհնար է պատկերացնել առանց ցուցադրական – ուսուցողական համապատասխան նյութերի: Մայրենիի, հայոց լեզվի և գրականության ուսուցումը այս առումով բացառություն չէ: Ավելին, վերոնշյալ առարկաները ուսուցանողից պահանջում են գիտական, ուսումնական, ճանաչողական բազմազան ու բազմապիսի մեթոդների իմացություն և դրանց նպատակային կիրառություն:

Մեր ժողովուրդն իր կյանքի բովից հանած, ադամանդացած անթիվ առածներ ու ասացվածքներ ունի, որոնք արդիական են և այսօր: Ահա դրանցից մեկը. «Մի անգամ տեսնելը տասն անգամ լսելուց լավ է»:

Իսկապես, փորձը ցույց է տալիս, որ ուսումնական գործընթացում տեսողական պատկերներն ավելի ներգործուն, ընկալելի ու դյուրամարս են:

Ուսումնական գործընթացի հաջողությունը պայմանավորող միջոցներից մեկն էլ թեմատիկ էքսկուրսիան է, որի նպատակը սովորողների մեջ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետաքրքրություն առաջ բերելն է, ճանաչողական ունակությունների զարգացումը, բարոյական հատկանիշների ձևավորումը, մշակութային արժեքների ընկալումը, գործնական հմտությունների ձեռքբերումը:

V դասարանում Ա. Պարսամյանի «Մեր լավաշ հացը» բանաստեղծությանը և տրամաբանական շեշտին հատկացված է չորս դասաժամ:

Նախապես պայմանավորվում եմ աշակերտներից մեկի ծնողի կամ բարեկամի հետ, ով ապրում է մեր քաղաքին կից գյուղի առանձնատներից մեկում, ապա աշակերտներին տեղեկացնում եմ, որ դասերԻց հետո երկժամանոց էքսկուրսիա ենք գնալու... Մեզ սիրով են ընդունում: Բակ ենք մտնում ու հայտնվում թոնրատանը...

Երեխաներից շատերը առաջին անգամ են թոնիր տեսնում և, բնականաբար, չգիտեն, թե ինչի համար է այն, թե հացն ինչ դժվարությամբ է ստեղծվում: Զարմանալի չէ. այսօր մենք հացը, ինչպես և մյուս մթերքները, պատրաստի գնում ենք խանութներից, որտեղ ոչ ոք մեզ չի բացատրում, թե որքան քրտինք է հոսում, մինչև հասկից լավաշ է

ստացվում: Մեր երեխաների բառապաշարում հացթուխ բառը անգամ անձնավորված չէ: Նրանք տեսնում են միայն հացավաճառներին և գիտեն, որ վերջիններս այն մարդիկ են, ովքեր հաց են վաճառում:

Հարգարժան տանտիկինն ու նրա երկու ժիր հարսները գործի են անցնում: Նրանցից մեկը խմորից գնդեր է անում, իսկ մյուսը դրանք գրտնակում է փայտե գրտնակով ձեռքի հմուտ շարժումներով քաշում – բացում է խմորը, ապա նետում ռաֆթայի վրա ու տալիս թոնրի առջև նստած օգնականին: Տանտիկինը այն խփում է թոնրի տաք պատին: Մի քանի րոպե հետո կարմրաշուրթ լավաշը պատրաստ է: Բարի տանտիկինը լավաշը բարձրացնում է, հպում ճակատին և մեկնում երեխաներին: Այդպես նա իր գոհունակությունն է հայտնում Տիրոջը ու աղոթում, որ հացն անպակաս լինի իր սեղանից:

Երեխաներին այս հացթուխ կինը, ում այտերը թոնրի թեժությունից կարմրել են, ճակատին քրտինքի կաթիլներ են շարվել, իսկ հոնքերին, մազերին ու թարթիչներին ալրափոշի է նստել, հեքիաթի բարի ոգի է թվում, ով կարող է ամեն ինչ անել:

Բարյացակամ հարսները թոնրատան անկյունում սեղան են բացել, և մենք գերագույն հաճույքով ըմբոշխնում ենք տնական պանիրն ու թոնրի արդար լավաշը… Վերադարձի ժամանակն է: Մենք, այս դասը «վայելած», բռնում ենք տունդարձի ճանապարհը: Նայում եմ իմ սաների դեմքին և հասկանում, որ մեր էքսկուրսիան ստացվել է: Ճանապարհին ձևակերպում եմ այս դաս – էքսկուրսիայի նպատակները՝ փորձելով հասնել նրան, որ աշակերտները հասկանան.

ա) հացը դժվար է ստեղծվում,

բ) հացդ վաստակի՛ր արդար քրտինքով,

գ) խոնարհվի՛ր հացին ու այն արարողի առջև,

դ) հարգի՛ր աշխատանքը,

ե) հացը սրբություն է, մի՛ նետիր այն ոտքերիդ տակ:

Բաժանվում եմ երեխաներից՝ հանձնարարելով, որ տանը մեծերի օգնությամբ հետաքրքիր տեղեկություններ հավաքեն լավաշի մասին և հաջորդ դասաժամին ներկայացնեն դասարանում:

Դասաժամն սկսում եմ մտագրոհով: Գրատախտակին գրում եմ հաց բառը և աշակերտներին հարցնում, թե այն ինչ մտքեր, դատողություններ է արթնացնում նրանց մոտ, ինչ են տեսնում: Բառերի իսկական տարափ է տեղում:



Լավաշ բառը գրում ենք կարմիրով՝ շեշտելով այն, ապա ստանում դասի վերնագիրը՝

«Մեր լավաշ հացը»:

Արտահայտիչ կարդում եմ բանաստեղծությունը և առաջարկում դիտել տեսանյութ, որը պատմում է լավաշի ստեղծման մասին: Դիտելու ընթացքում երեխաները ոգևորված թվարկում են երեկվա հացթուխ կանանց գործողությունների հաջորդականությունը, նշում, որ լավաշը թխվում է թոնրում: Եվ դա այնքան էլ հեշտ գործ չէ: Երեկվա «դասն» իր գործն արել է: Սա առաջին և ամենակարևոր քայլն է հաջողության ճանապարհին:

Ապա բացատրում եմ, որ լավաշ բառն ունի հայկական ծագում: Բառի հիմքում պատրաստման եղանակն է ընկած, որին երեխաներն արդեն ծանոթ են:

Այնուհետև դասարանը բաժանում եմ երեք խմբի և յուրաքանչյուրին առանձին հանձնարարություն տալիս: Ցանկալի է, որ խմբային աշխատանքները կատարվեն ցուցապաստառների վրա, որպեսզի ավելի տեսանելի լինեն:

I խումբ- հաց արմատով նոր բառեր կազմել:

II խումբ- հաց բառով կազմել բառակապակցություններ:

III խումբ- բանաստեղծությունից ընտրել բանալի բառերը, դուրս գրել լավաշի հեղինակային բնորոշումները:

Ստուգում եմ արդյունքները.

Առաջին խումբ – հացատուն, հացակեր, հացման, հացառատ, հացահատիկ, հացագործ, հացադուլ, մեղրահաց, աղուհաց, գարեհաց:

Երկրորդ խումբ - սպիտակ հաց, տաք հաց, համեղ հաց, հանապազօրյա հաց, խրթխրթան հաց, փափուկ հաց, սուրբ հաց, ախորժելի հաց/:

Երրորդ խումբ - Լավաշը համբերությունն է, մեր էությունն է, հավատն է, աղոթքն է, մեր պարզությունն է, մեր տրտմությունն է, մեր սրբությունն է:

Երրորդ խմբի աշխատանքն օգտագործում եմ հաջորդ քայլն անելիս: Հարցնում եմ դասարանին. «Ենթադրենք կանգնած եք փակ դռների առջև և շատ եք ուզում ներս մտնել: Ձեզ ի՞նչ է պետք»: Բնականաբար նրանք կասեն, որ բանալի է հարկավոր: Ես փաստում եմ, որ երրորդ խումբը գտել է բանաստեղծության բոլոր տողերի բանալիները: Եվ մենք միասին կարող ենք ներս մտնել:

Մինչ ուղղորդված ընթերցանությանն անցնելը աշակերտներին խնդրում եմ առանձնացնել այն բառերը, որոնք շեշտված են՝ համբերություն, էություն,սրբություն, պատմություն և այլն: Դա արդյո՞ք բառային շեշտ է: Նրանք նշում են, որ բառային շեշտը որևէ ձայնավորի ուժգին արտասանությունն է, որը գրավոր խոսքում սովորաբար չի դրվում: Իսկ այստեղ շեշտված բառերը ամենակարևորն են նախադասության մեջ: Գեղարվեստական խոսքում, հատկապես բանաստեղծություններում, հեղինակներն այս կամ այն բառի կարևորությունը նշելու նպատակով հաճախ շեշտ են դնում. դա տրամաբանական շեշտն է: Հաջորդ դասաժամի նախագիտելիքը տրված է:

Բանաստեղծական յուրաքանչյուր տողի մեկնաբանություն համեմում եմ նախապես ընտրված ասացվածքներով: Այսպես՝

1.Աղ ու հաց, սիրտը ՝ բաց:
2. Մի փոր հացը ոչ ոքի չի քանդի:
3. Լեզուն մեկ կխոսի, հացը՝ երկու:
4. Քեզի քարով զարկողին դուն հացով զարկե:
5. Հացի կտրածը թուրը չի կտրի:
6. Մինչև քրտինքը ճակատդ չլվանա, տունդ հացով չի լիանա:

Վերջին երկու տողը մեկնաբանելիս կրկին հարց եմ ուղղում դասարանին, թե ինչն է սուրբ յուրաքանչյուրի համար: Պատասխանները կանխատեսելի են՝ հայր, մայր, քույր, եղբայր, հարազատ տուն, ծննդավայր, հայրենիք և այլն:

Խոսքս շարունակում եմ այսպիսի բովանդակությամբ. «Սիրելի՛ երեխաներ, ձեր իմացածին ավելացրե՛ք նաև հաց բառը: Հացը մեզ՝ հայերիս համար միշտ սուրբ է եղել: Մենք հացի պաշտամունք ունեցող ժողովուրդ ենք, ժողովուրդ, որ գիտի դրա գինը, որ թե՛ ուրախության, թե՛ տխրության ժամին իր տուն մտնողին պատվել է հացով: Եվ Տիրոջից ամենօրյա իր աղոթքներով հանապազօրյա հաց է խնդրել: Մեզ համար հացը Տիրոջ պարգևն է՝ թանկ, սուրբ, պաշտելի: Դրա համար էլ, երբ ուզում ենք, որ մեզ հավատան, երդվում ենք հացով. «Էն հացը վկա...», իսկ

երբ խոցվում ենք ընկերոջ, բարեկամի անվայել, խարդախ արարքից, ասում ենք. «Հարամ լինի քեզ հետ կերած հացը»: Եվ, վերջապես, մեր լավաշ հացի ու հայ ժողովրդի ճակատագրերն այնքան նման են: Երկուսն էլ պարզ են ու բաց ամենքի առաջ: Երկուսն էլ կրակի բոցերով են անցել, բայց չեն մոխրացել, թրծվել են, ամրացել, երկուսն էլ հաղթել են հուսահատությանը, դարձել արժեք»:

Ապա բացատրում եմ անհասկանալի բառերը՝ շեշտելով դրանց՝ բանաստեղծության մեջ առկա կոնկրետ իմաստը:

Թրծել- 1. բարձր ջերմություն տալով կարծրացնել
2. կոփել, ամրացնել, դաստիարակել
3. կերտել, շինել
4. վարժեցնել, հմտացնել

Հառնել- 1. ելնել, վեր կենալ
2. վեր բարձրանալ, վեր խոյանալ
3. հարություն առնել
4. զարգանալ, բարգավաճել
5. երևալ, ծագել, առաջանալ

Նշխար- 1. անթթխմոր հաց, որով հաղորդություն են տալիս հավատացյալներին
2. սրբերի կմախքից մնացած մասունք
3. թանկագին հիշատակ
4. աճյուն, դիակ

Կարկտահար **–** կարկուտից ծեծված, վնասված

Թոնիր- գետնի մեջ փորված գլանաձև վառարան, որտեղ լավաշ են թխում:

Այնուհետև աշակերտները ներկայացնում են հետաքրքիր տեղեկություններ լավաշի մասին:

1-ին աշակերտ – Լավաշը ամենաերկար պահպանվող հացամթերքն է: Եթե հացի այլ տեսակներ իրենց պիտանելիությունը, թարմությունը պահպանում են ընդամենը 2-3 օր, ապա լավաշը կարող է օգտագործվել ամիսներ շարունակ:

2- րդ աշակերտ- Հայ տանտիկինները, օրինակ, լավաշը թխում էին ողջ ձմեռվա համար: Դրանք դարսում էին իրար վրա ու պահում չոր տեղում, իսկ երբ անհրաժեշտ էր, թրջում էին լավաշը և օգտագործում:

3-րդ աշակերտ- Հայերը լավաշ հացը թերևս անհրաժեշտությունից են ստեղծել: Մեր թշնամիներն այնքան շատ ու անարգ են եղել, որ մեզ խաղաղ ապրելու, աշխատելու հնարավորությունից հաճախ զրկել են: Եվ հայը չի իմացել, թե հաջորդ անգամ ինքը երբ հնարավորություն կունենա

հաց թխելու կամ հող վարելու. դրա համար էլ թխել է, երբ պատերազմից աչք է բացել, թխել է դիմացկուն հաց, թխել է շատ:

4-րդ աշակերտ- Մեր երկիրը լեռնային է, դժվարանցանելի: Ձմռանը ճանապարհները փակվել են, հաղորդակցությունը բնակավայրերի միջև հաճախ դադարել է: Իսկ հայը գտել է միջոց, որ իր սեղանը դատարկ չմնա: Հաց է թխել միանգամից 2– 3 ամսվա համար:

5-րդ աշակերտ –Հայկական լավաշը նուրբ, երկար մինչև 70-80 սմ հաց է, որի վրա աչք ունեն շատերը: Մեր հարևանները պնդում են, որ հացի այդ տեսակի հեղինակը իրենք են: Բայց պատմությունն այլ բան է ասում: Հայաստանում լավաշը հայտնի էր հազարամյակներ առաջ: Օրինակ՝ Արտաշատի պեղումներ ժամանակ հայտնաբերվել է Ք. ա. առաջին հազարամյակի գետնափոր կավե թոնիր:

Մի այլ աշակերտ շատ հետաքրքիր ավանդություն է հիշում, ըստ որի՝ Եփրատն անցնելիս Ալեքսանդր Մակեդոնացին պաշարում է հայկական մի բերդ: Մեծ աշխարհակալի բանակը երեք օր շարունակ գրոհում է, սակայն հայերը մնում են անսասան, բերդը՝ անառիկ: Չորրորդ օրը հայերը բերդի աշտարակից կախում են մի մեծ լավաշ՝ խիստ զարմացնելով Մակեդոնացու զինվորներին: Վերջիններս կարծում են, թե հայերը հոգնել են և անձնատուր են լինում: Այդպես էլ զեկուցում են զորավարին:

Մակեդոնացին իմաստուն մարդ էր և անմիջապես հասկացավ հայերի մտադրությունը: Նա հրամայեց, որ պաշարումը դադարեցնեն և շարժվեն առաջ, քանի որ հացապաշտ այս ժողովուրդը հաշտություն է ուզում և լավաշով հասկացնում է արյան ու կռվի անհեթեթությունը: Հացը խաղաղության ու հաշտության խորհրդանիշ է:

Ինձ մնում է այս դասաժամի համար անդրադարձ կատարել.

ա) Սովորեցի, որ…

բ) Հասկացա, որ…

գ) Գիտեմ, որ…

դ) Կհիշեմ, որ…

Պատասխաններից կարելի է եզրակացնել, թե որքանով ընկալվեց ուսումնական նյութը:

Իբրև տնային աշխատանք հանձնարարում եմ բանաստեղծությունը վարժ կարդալ, գտնել դժվար գրություն ունեցող բառերը, հաց բառի տարբեր իմաստներով կազմել նախադասություններ (երեք նախադասություն):

Հաց- 1. ցորնահաց

2. սնունդ

3. ապրուստի միջոց:

Բանալի բառեր՝ *դասավանդում, ուսուցում, մեթոդ, ուսումնական գործընթաց, թեմատիկ էքսկուրսիա, գործնական հմտություններ, թոնիր, լավաշ, խմբային աշխատանք, սրբություն, էության բառային շեշտ, առած, ասացվածք:*

LEARNING THE POEM "OUR BREAD LAVASH" THROUGH THE LESSON-EXCURSION

A. A. AZARYAN
Teacher of the Armenian Language and Literature
at Hrazdan N12 School

In order to reveal and study the content of Parsamyan's poem of "Our bread lavash", using interactive methods, group work, excursions, didactic materials, the author of the article makes the process of creation and worship of bread as well as the proverbs about bread prevalent in the people quite tangible and obvious for students.

ОБУЧЕНИЕ СТИХОТВОРЕНИЮ "НАШ ХЛЕБ ЛАВАШ" ПОСРЕДСТВОМ УРОКА-ЭКСКУРСИИ

А. А. АЗАРЯН
Учительница армянского языка и литературы
12-ой школы г. Раздан

С целью раскрытия и изучения содержания стихотворения Парсамяна «Наш хлеб лаваш», применяя интерактивные методы, групповую работу, экскурсии, дидактические материалы, автор статьи делает для учащихся вполне ощутимым, очевидным и вразумительным процесс сотворения и почитания хлеба, пословицы о хлебе, бытующие в народе.